Ալֆիերի և իր ծառան Ելիա

Մատրիտի մէջ ձանձրացայ, և հաղիւ թէ դժուարաւ ամիս մը կեցայ. ոչ խօսեցայ՝ և ոչ ճանչցայ հոն մէկը, բաց 'ի մէկ ժամադործ սպանիօլէ մը՝ որ ան միջոցին Հոլանտայէն կը դառնար, ուր գացած էր իր արհեստին համար։ Այս երիտասարդը՝ 'ի բնէ հանճարեղ էր, և քիչ մ'ալ աշխարհք տեսած ըլլալով՝ ինծի հետ վշտանալ կը ցուցնէր, այնչափ զանազան բարբարոսութեանց համար, որոնցմէ կը նեղուէր իւր հայրենիքը։ Հոս համառօտիւ մը պատմեմ իմ մէկ յիմար տմարդութիւնս, որ իմ Ելիա ծառայիս դէմ ըրի այն սպանիօլին առջև։ — Իրիկուն մը՝ որ այս ժամադործը հետս մէկտեղ ընթրեց՝ և ընթրիքէն վերջը դեռ սեղանատախտակին առջին կեցած կը խօսակցէինք, ներս մտաւ Ելիա, ըստ սովորութեան, մաղերս շտկելու՝ որպէս զի վերջը անկողին երթանք. և կարկինով ճղմելու ատեն, մաղերուս մէկ մասը միւսներէն քիչ մը աւելի քաշեց։ Իսկ ես առանց բան մը զուրցելու կայծակի արագութեամբ վեր ցատքեցի, և ստոլին վրայ դրուած երկու աշտանակներէն մէկը ձեռքս առնելով՝ այնպիսի վայրագ հարուած մը իջեցուցի աջ երեսին որ մէկէն աղբիւրի մը պէս արիւնը ցայտեց այն երիտասարդին երեսը և վրան, որ ընթրեաց լայն սեղանատախտակին անդիի կողմը դէմս նստած էր։ Երիտասարդը, որ (իրաւամբ) զիս փախուցեալ կարծեց, և որ չկարենալով դուշակել որ մաղի մը քաշուածքը ինծի յանկարծական կատաղութիւն պատճառեց, շուտ մը ինքն ալ աճապարեց ոտք ելաւիր զիս բռնելու։ Բայց այն միջոցին քաջասիրտ Ելիան ցնցուած և անդութ կերպով վիրաւորուած, կռնակս յարձակեր էր զիս ծեծելու. և աղէկ ըռաւ։ Սակայն ես արագութեամբ փախայ ձեռքէն և սրոյս վազեցի, որ սենեկին մէջ անտուկի մը վրայ կը կենար, և ատեն ունեցայ զանիկա պատենէն մերկացնելու։ Բայց Ելիա կատղած ինծի դէմ դարձաւ. իսկ ես, սուրս իր կուրծքին շտկեցի. սպանիօլը մէյմը զիս, մէյմը ղելիան կ'արգելուր, բոլոր պանդոկը շփոթութեան մէջ էր, և սենեկապանները վեր ելած. և այսպէս դադրեցաւ այն եղերակատակ կռիւը որ իմ կողմանէս գայթակղական էր։ Եղբը հոգինիս խաղաղելով՝ եղածը մեկնեցի սկըսանք. ես ըսի որ մազերուս քաշուիլը զգալով ինքիրմէս դուրս ելայ. Ելիան ըսաւ որ ամենևին չէր իմացած. սպանիօլը ստուգեց որ ես փախուցած չէի, բայց թէ շատ ալ իմաստուն չէի։ Այսպէս լմնցաւ այն սոսկալի կռիւը, ուսկից ես ցաւալից և ամօթալի մնացի, և ըսի Ելիային որ լաւ ըրած կ'ըլլար եթէ զիս սպաննած ըլլար։ Եւ կարող էր այս բանս ընելու, ինծմէ թիզ մը երկայն ըլլալով, որ շատ բարձրահասակ եմ, և ուժովը և քաջութեամբը կերպարանքէն ոչ ինչ ընդհատ։ Երեսին վերքը խոր չեղաւ, բայց շատ արիւն վազեց, և եթէ քիչ մը աւելի վերով տուած ըլլայի հարուածը՝ ինծի ամենասիրելի մարդ մը սպաննած պիտի ըլլայի, մազի մը քիչ մը աւելի կամ պակաս քաշուելուն համար։ Սոսկացի այսպիսի անբանական բարկութեանս վրայ. և թէպէտ կը տեսնայի զելիա հանդարտած, բայց ոչ զուարթացած, սակայն չուզեցի ամենևին անվստահութիւն մը ցուցնել վրան, կամ արծարծել. և գրեթէ երկու ժամէն վերջը երբ վերքը պատեցին և ամեն բան կարգի դրուեցաւ՝ անկողին գացի, բայց թողլով ըստ սովորութեան այն դուռը որ Ելիային սենեակը կը հանէր և իմ սենեկիս կողմն էր, առանց ամենևին մը-տիկ ընելու սպանիօլին, որ խորհուրդ կու տար չհրաւիրել դեռ նոր բարկացած և ցնցուած մարդու մը վրէժխնդրութիւնը։ Մանաւանդ թէ ես բարձր ձայնով ըսի Ելիային որ արդէն անկողին մտեր էր, թէ ուզելու ըլլար, նոյն գիշերը կրնար զիս սպաննել, թէ որ իրեն շահաւոր էր, որովհետև ար-

ժանի էր։ Ի վերայ այսր ամենայնի դիւ-
ցազն էր նա ոչինչ ընդհատ ինծմէ.
բնաւ ուրիշ վրէժ չուզեց առնել, բայց
եթէ պահել երկու արիւնալից թաշկի-
նակներ, որոնցմով նախ սրբուած էր
վերքը, և վերջը երբեմն երբեմն ցուցընել
ինծի զանոնք որ իրեն շատ տարիներ
ծառայեցին։ Այս երկուքնուս կողմանէ
փոփոխ վայրագութիւնը և մեծանձնու-
թիւնը չկրնար հասկընալ այնպիսին,
որ մեր Բիւմենդեցւոցս բաղքը և արիւ-
նը չճանչնար։

ԾԱԳՈՒՄՆ ԼՈՒՍՆԻ

Ահա լուսին. զի մեղմ յուշիկ
Ման առնու զայ զդարեւանդիւք.
Երկիր համբուն նընջէ լռիկ,
Ոչ շրշընջէ խոնջեալն սիւք։

Ճանապարհորդք պարտասեալք՝ արդ
Դիտեն զծագեալ նըշոյլս զլուսթ,
Որ յայտնէ զդաշտ եւ զճանապարհ
Խոսկեզծէ զամենայն ծառ։

Ցոլս հատանէ եւ ծածանի
Մանուածաւալ ի խաղս առուի.
Թափ անցանէ 'դ անտառըս սեւս
Ճաճանչագեղ ցայտի 'տերեւս։

Այսպէս երբեմն ի բլուրս ցուդայ
Ծագէր 'դ երեկս լոյս գերակայ.
Մեծ աւետիք ի հրոյն հնչեն
Տեսեալ հովուաց՝ պակնուն պարեն։

Եւ ցարդ այն լոյս՝ ծագաց հանուրց
Սիրէ զճաճանչ իւր ուղեցոյց.
Պայծառ ի ժամ կենաց ծագման,
Պայծառագոյն եւս ի փակման։

Այլ այդ լուսին՝ ոչ մինչ խսպառ
Ի մէջ գիշեր ցուցցի պայծառ.
Իսկ զոր ելոյց ցէր՝ անմրթար
Ծագեսցէ այս լոյս յանկէտ դար։

ԲԻՊՈՏԻ

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ